Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի Գրասենյակ



ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013

Հելսինկյան Քաղաքացիական
Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

Բաց Հասարակության Հիմնադրամ-Հայաստան

Սույն հաշվետվությունում տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակն է, որն էլ միայն պատասխանատու է նյութի բովանդակության համար: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց Հասարակության Հիմնադրամների կողմից, հետևաբար չեն ներկայացնում Բաց Հասարակության Հիմնադրամների դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն հաշվետվության բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց Հասարակության Հիմնադրամների տեսակետներին:

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ	4
ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԱՍԻՆ	6
ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ	10
ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	23
ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	26
2013 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ	29
ԶԵԿՈՒՅՑՆԵՐ	32
ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	34
ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՑԱՆՑԵՐ	35

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի՛ գործընկերներ,

Ձեզ ենք ներկայացնում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործունեության տարեկան հաշվետվությունը, որը հնարավորություն կտա համապարփակ պատկերացում կազմել անցած տարում մեր կազմակերպության գործունեության ուղղությունների և արդյունքների մասին: Թե որքանով է մեզ հաջողվել հասնել մեր առաքելությանը և նպատակներին, իհարկե, կարելի է կարծիք կազմել ոչ միայն հրապարակվող տարեկան հաշվետվությունից, այլև այն քաղաքացիներից (1103), որոնց իրավական աջակցություն և խոհրդատվություն է տրամադրվել նախորդ տարում: Այդ քաղաքացիներից շատերի գործերով Կազմակերպությունը շարունակում է զբաղվել նաև այս տարի:

Մենք չենք իրականացնում որևէ քաղաքական գործունեություն և մեզ չենք տեսնում քաղաքականության մեջ, սակայն մեր գործունեությունն անխուսափելիորեն կապված է Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող իրադարձությունների, ինչպես նաև քաղաքական որոշումների հետ: Այսպես, 2013թ. սեպտեմբերի 3-ի հայտնի որոշումը՝ Եվրոպական միության հետ Ասոցացման համաձայնագրից հրաժարվելու և մաքսային միությանը Հայաստանի անդամակցելու վերաբերյալ, իհարկե լուրջ ազդեցություն ունեցավ կազմակերպության ներկայիս գործունեության և ապագա առաջնահերթությունների վրա: Այդ որոշումը մենք գնահատում ենք որպես լրջագույն մարտահրավեր Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարական հաստատությունների զարգացման տեսանկյունից: Համոզված ենք, որ այս նոր իրավիճակի դրսևորում է այն, որ «կարճատև դադարից» հետո 2013թ. Հայաստանում վերստին ունեցանք քաղաքական բանտարկյալներ՝ հանձինս Վոլոդյա Ավետիսյանի, Շանթ Հարությունյանի և նրա ընկերների:

Հստակ է, որ 2013 թ. սեպտեմբերի 3-ից հետո մենք հայտվել ենք մի նոր իրավիճակում. երբ իրավապաշտպան գործունեության խնդիրը հանդիսանում է այլևս ոչ թե մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների հզորացումը և ժողովրդավարական հաստատությունների զարգացումը, այլ մարտահրավերների դիմագրավումը և իրավիճակի էլ ավելի վատթարացման կանխումը: Եվ այս իրավիճակում հատկապես կարևորվում է Կազմակերպության աշխատանքների և գործունեության հետևողական, սկզբունքային և գրագետ կազմակերպումը:

Հարգանքով
Արթուր Սաքունց
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ

ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի՛ գործընկերներ,

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տարեկան հաշվետվությունը արտացոլում է ոչ միայն կազմակերպության գործունեության արդյունքները, այլև Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու իրավական ոլորտները: Երկրի համար առանցքային ժամանակաշրջանում ՀՔԱ Վանաձորի գրասենյակին հաջողվել է «ձեռքը պահել» կարևոր իրողությունների զարկերակի վրա և աշխատել ու արդյունքներ ապահովել ամենացավոտ ոլորտներում:

Կազմակերպության խորհուրդը գոհունակություն է հայտնում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի բյուջեի աճին զուգընթաց՝ գործունեության, աշխատակազմի, կառուցվածքային փոփոխությունների, ներքին մասնագիտական ներուժի հզորացման, շահառուների և գործընկեր կազմակերպությունների թվի աննախադեպ աճի և գրանցված հաջողությունների վերաբերյալ:

Մենք կարծում ենք, որ թե՛ միջնաժամկետ, թե՛ ռազմավարական նպատակների առումով ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գործում է կանոնադրության և մարդու իրավունքների համընդհանուր շարժման ոգուն և տառին համապատասխան: Այս իմաստով, գտնում ենք, որ այս հաշվետվությունը ոչ միայն թվերի և դեպքերի շարադրանք է, այլ նաև Հայաստանի հանրային կյանքի պատմության մի մասը՝ մեկ տարվա կտրվածքով:

Արմեն Սարգսյան
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի խորհրդի անունից

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (այսուհետ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ) հիմնադրվել է 1998 թ. որպես Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Հայաստանի կոմիտեի մասնաճյուղ: Այն 2001 թ. ՀՀ արդարադատության նախարարության կողմից գրանցվել է որպես հասարակական կազմակերպություն և վերագրանցվել 2005 թ.: Կազմակերպության գրասենյակը գտնվում է Լոռու մարզկենտրոն Վանաձոր քաղաքում: Կազմակերպությունը ունի ներկայացուցչություն նույն մարզի Ալավերդի, Տաշիր, Սպիտակ քաղաքներում: 2013 թ. հոկտեմբերին հիմնադրվեց ՀՔԱ Վանաձորի գրասենյակի Երևանի ներկայացուցչությունը:

Կազմակերպությունն իր գործունեությունը ծավալում է հանրապետության ողջ տարածքում և գործում է երեք հիմնական ոլորտներում՝ մարդու իրավունքների պաշտպանություն, շահերի պաշտպանություն և խաղաղասիրություն:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեսլականն է՝ մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն:

Կազմակերպության առաքելությունն է՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը:

Ռազմավարական նպատակներն են՝ նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը և խախտված իրավունքների վերականգման ազգային մեխանիզմների հզորացմանը, մարդու իրավունքների գաղափարի տարածմանը, իրավապաշտպանական և խաղաղասիրական շարժման ընդլայնմանը ՀՀ-ում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ձևավորմանը և զարգացմանը:

Կազմակերպության ռազմավարական նպատակների շարքում կարևոր դեր ունի կազմակերպության ենթակառուցվածքային հենքի, կազմակերպական մշակույթի և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը:

Ռազմավարական նպատակներին հասնելու համար կազմակերպությունը տրամադրում է իրավական աջակցություն, իրականացնում է մարդու իրավունքների վիճակի մշտադիտարկում փակ և կիսափակ հաստատություններում (քրեակատարողական հիմնարկ, ոստիկանություն, զինված ուժեր, նյարդահոգեբուժական բուժհաստատություն, նարկոլոգիական բուժհաստատություն, մանկատուն, տարեցների տուն), ընտրական գործընթացների դիտորդություն, քաղաքացիական վերահսկողություն դատաքննության, թիրախային ոլորտներում պետական ծախսերի և թիրախային ոլորտներում պետական ծրագրերի իրականացման նկատմամբ, շահերի պաշտպանություն՝ ուղղված ազգային օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի համապատասխանեցմանը միջազգային չափորոշիչներին, իրականացնում է ռազմավարական դատավարություններ, մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ իրազեկում, պատրաստում և ներկայացնում է ստվերային զեկույցներ ՀՀ միջազգային պարտավորությունների վերաբերյալ, պատրաստում է հրատապ հայտարարություններ, զեկույցներ Հայաստանում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ:

Կազմակերպության կողմից իրականացվող բոլոր գործողությունները միտված են մարդու

իրավունքների պաշտպանությանը, կոնֆլիկտի խաղաղ կարգավորմանն աջակցելուն, քաղաքացիական նախաձեռնությունների աջակցմանը և առանձին թիրախ խմբերի իրավունքների պաշտպանությանը:

Թիրախ խմբերն են՝ զինծառայողները, զորակոչիկները և նրանց ընտանիքները, ռազմագերիները, անհայտ կորածները, հակամարտություններից տուժածները և նրանց ընտանիքները, հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ընտանիքները, դատապարտյալները, կալանավորները և նրանց ընտանիքները, թմրամիջոց գործածողները և նրանց ընտանիքները, քրեական գործերում ներգրավված վկաները, տուժածները, կասկածյալները, մեղադրյալները և նրանց ընտանիքները, քաղաքացիական և քաղաքական ակտիվիստները, ընտրողները, դիտորդները, կրոնական փոքրամասնությունները, սոցիալապես խոցելի խմբերը և երիտասարդները:

Խորհուրդ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի խորհուրդը ընտրվել է 2012 թ. մարտին և բաղկացած է 5 անդամներից: Խորհրդի նախագահությունը փոխանցվում է այբբենական կարգով, վեցամսյա ժամկետով: 2013 թ. առաջին կիսամյակի ընթացքում խորհուրդը նախագահել է Անգնիեշկա Կլասովսկան, երկրորդ կիսամյակի ընթացքում՝ Արմեն Սարգսյանը:

Ագնեշկա Կլասովսկա «Մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամ» Լեհաստան, կազմակերպության ղեկավար	Պասկալ Բոկկերս միջազգային փորձագետ	Արմեն Սարգսյան «Ինտերնյուզ» Մեդիա աջակցման կենտրոն ՀԿ, պրոդյուսեր	Զիգֆրիդ Վոբեր «Ավստրիական հելսինկյան ասոցիացիա հանուն մարդու իրավունքների և միջազգային երկխոսության կազմակերպություն», անդամ	Քրիստ Մարուքյան «Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲԸ, Վանաձոր մասնաճյուղ, կառավարիչ

Աշխատակազմը

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահը կազմակերպության հիմնադիր անդամ Արթուր Սաքունցն է: 2013 թվականին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ունեցել է մշտական աշխատակազմի 22 անդամ, որոնցից չորսը կազմակերպության ներկայացուցչությունների աշխատակիցներ և 98 կարճաժամկետ ծառայություն մատուցող: 2013 թ. Եվրոպական կամավորական ծառայություն ծրագրի շրջանակներում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հյուրընկալել է 2 կամավոր Ավստրիական հելսինկյան ասոցիացիա հանուն մարդու իրավունքների և միջազգային երկխոսության կազմակերպությունից:

Արթուր Սաքունց ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ	Մանուշակ Օհանյան Գլխավոր հաշվապահ	Վարդինե Գրիգորյան Գրասենյակի կառավարիչ	Անի Ղամբարյան Հանրային կապերի մասնագետ (հունվար -օգոստոս 2013թթ.)	Հասմիկ Կարապետյան Հանրային կապերի մասնագետ (օգոստոս - դեկտեմբեր 2013 թթ.)	Սուրեն Անանյան Գրասենյակի վարչական օգնական	Գայանե Հարությունյան Տեղեկատվական Տեխնոլոգիաների մասնագետ
Օֆելյա Զալյան Ծրագրերի համակարգող	Արմինե Սադիկյան Խաղաղասիրության բաժնի համակարգող	Անահիտ Չիլինգարյան Շահերի պաշտպանության բաժնի համակարգող	Արայիկ Զալյան Իրավաբան	Անի Չատինյան Իրավաբան	Սուզաննա Ղարաղաշյան Պացիենտների հարցերով իրավաբան (հունվար - սեպտեմբեր 2013 թթ.)	Լիլիթ Ղաբուզյան Պացիենտների հարցերով իրավաբան (սեպտեմբերից -դեկտեմբեր 2013 թթ.)
Տաթևիկ Սիրադեղյան Իրավախորհրդատու (Երևանի ներկայացուցիչ)	Սյուզաննա Սողոմոնյան Իրավաբանի օգնական	Արտուր Հարությունյան Իրավախորհրդատու (Սպիտակի ներկայացուցիչ)	Սյուզաննա Պողոսյան Իրավախորհրդատու (Ալավերդու ներկայացուցիչ)	Մարիետա Թեմուրյան Պացիենտների հարցերով Մշտադի տարկման մասնագետ	Նազելի Մովսեսյան Խաղաղասի ության Բաժնի օգնական	Նարինե Սելիմյան Գրասենյակի օգնական (Հունվար -հոկտեմբեր 2013 թ.)
Էլլադա Նասիբյան Իրավախորհրդատու (Տաշիրի ներկայացուցիչ)	Լիլիթ Ղամբարյան Գրասենյակի օգնական (Հոկտեմբեր - դեկտեմբեր 2013 թ.)	Փելին Օզման (Եվրոպական կամավորական ծառայության կամավոր)	Դանիել Լաաբեր (Եվրոպական կամավորական ծառայության կամավոր)			

2013 թ. կազմակերպությունը շարունակել է ուսումնասիրել մարդու իրավունքների վիճակը զինված ուժերում, ոստիկան-քաղաքացի հարաբերություններում, նյարդահոգեբուժական և նարկոլոգիական բուժհաստատություններում, քրեակատարողական հիմնարկներում և հատուկ դպրոցներում: 2013 թ. կազմակերպության գործունեության կարևոր մաս է կազմել կազմակերպության ինստիտուցիոնալ զարգացումը և կազմակերպական կարողությունների զարգացումը: Ներգրավված փորձագետների օգնությամբ մշակվել են անհրաժեշտ փաստաթղթեր և ընթացակարգեր կազմակերպության կայուն գործունեության համար, մշակվել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ռազմավարական գործողությունների պլանը 2014-2018 թթ. համար: Կազմակերպվել են ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցների կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացներ: Հավատարիմ մնալով իր ռազմավարությանը՝ կազմակերպությունը շարունակել է քաղաքացիների ներգրավումը իրավապաշտպանական շարժման մեջ՝ (դիտորդական առաքելություն, մշտադիտարկումներ փակ և կիսափակ հաստատություններում, հասարակական կարծիքի ուսումնասիրություն և սոցիոլոգիական հարցումներ): Կազմակերպվել են ՀՀ-ում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ հանրային և հասարակական քննարկումներ, հեռուստահաղորդումներ, գովազդներ, հեռուստաբանավեճեր: 2013 թ. իրականացվել են փորձի փոխանակման ծրագրեր մարդու իրավունքների պաշտպանության, խաղաղասիրության և շահերի պաշտպանության բնագավառներում: Ընդլայնվել է համագործակցությունը խաղաղասիրական և իրավապաշտպան կազմակերպությունների, ակտիվիստների, քաղաքացիական նախաձեռնությունների և ցանցերի հետ, իրականացվել են համատեղ միջոցառումներ, պատրաստվել են զեկույցներ, տարածվել են համատեղ հայտարարություններ: Հատուկ ուշադրություն է դարձվել Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեթոդների զարգացմանը և տարածմանը: Մշտադիտարկվել է պետական քաղաքականություն իրականացնող մարմինների բյուջետավորման գործընթացի թափանցիկությունը, հաշվետվողականությունը, որոշումների կայացման մասնակցային գործընթացը: 2013 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իրականացրել է 10 դրամաշնորհային ծրագիր՝ ուղղված կազմակերպության ռազմավարական նպատակների իրականացմանը: Կազմակերպությունը շարունակել է աշխատանքները ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների և ՀՀ խնամքի և հատուկ ուսումնական հաստատությունների երեխաների իրավունքների պաշտպանությունը մշտադիտարկող խմբերում: Դիտորդական խմբերում ներգրավված կազմակերպության աշխատակիցները մասնակցել են արագ արձագանքումների, պլանային այցերի, պատրաստել են հաշվետվություններ և մասնակցել են խմբերի կողմից ներկայացվող տարեկան զեկույցների պատրաստմանը: Կազմակերպությունը հանդիսացել է նաև Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության քաղաքականություն մշակող խմբի անդամ: Խմբում ներգրավված կազմակերպության աշխատակիցը մասնակցություն է ունեցել խմբի կողմից Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարության և ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկի մշակմանը:

ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կայունություն և զարգացում» եռամյա ծրագիրը[1] ուղղված է Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը և զարգացմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, քաղաքացիական մասնակցության ազգային մեխանիզմների ամրապնդմանը և քաղաքացիական վերահսկողության ներուժի խթանմանը:

Ծրագրի արդյունքում ձևավորվել է կազմակերպության մշտական աշխատակազմը, որն ապահովում է կազմակերպության շարունակական գործունեությունը և ռազմավարական նպատակների իրականացումը: Ծրագրի շրջանակներում աշխատակազմը մասնակցել է «Զեկույցների և հաշվետվությունների պատրաստում» և «Դասընթացավարների վերապատրաստում» թեմաներով դասընթացների, որոնք նպատակ ունեին զարգացնել աշխատակիցների մասնագիտական կարողությունները: Աշխատակազմի 5 անդամներ մասնակցել են անգլերեն լեզվի ուսուցողական դասընթացների:

Իրավական աջակցություն

2013 թ. ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրավական աջակցություն է տրամադրվել 722 քաղաքացու (376 բանավոր ընթացակարգով, 346 գրավոր ընթացակարգով):

2013 թ. ընթացքում զորակոչին և զինծառայությանն առնչվող հարցերով կազմակերպություն է դիմել 48 անձ, որից 27 զորակոչիկ, 9 զինծառայող, 8 սպա, զորացրված 3 զինծառայող և 1 նախկին սպա:

Կազմակերպության իրավաբանների կողմից դատական ներկայացուցչություն է ապահովվել թվով 28 ռազմավարական նշանակություն ունեցող գործերով, որոնցից՝

- ✧ կյանքի իրավունք՝ 7 գործ,
- ✧ արդար դատաքննության իրավունք՝ 8 գործ,
- ✧ խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք՝ 1 գործ,
- ✧ պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության իրավունք՝ 1 գործ,
- ✧ տեղեկատվություն ստանալու (արտահայտվելու) իրավունք՝ 2 գործ,
- ✧ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք (զորակոչիկի իրավունք)՝ 2 գործ,
- ✧ բնակարանի անձեռնմխելիության իրավունք՝1 գործ,
- ✧ կազմակերպության գործունեությանը անհարկի չմիջամտելու իրավունք՝ 3 գործ,
- ✧ ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք՝ 1 գործ,
- ✧ սեփականության իրավունք՝ 1 գործ,
- ✧ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք՝ 1 գործ:

2013 թ. ընթացքում քաղաքացիները ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմել են հետևյալ իրավունքների խախտումներով՝ կյանքի իրավունք, խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք, արդար դատաքննության իրավունք, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք, առողջության պաշտպանվածության իրավունք, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք, սեփականության իրավունք, սոցիալական ապահովության իրավունք, ընտանեկան իրավունք, զորակոչիկի իրավունքներ, արտահայտվելու/տեղեկատվության ազատության իրավունք, աշխատանքային իրավունք, սպառողների իրավունք, ընտրական իրավունք, քաղաքացիություն ստանալու իրավունք, ազատ տեղաշարժի իրավունք, կրթության իրավունք, ապահովագրական իրավունք (ԱՊՊԱ):

2013 թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում կազմակերպության կողմից ուղարկվել է 732 գրություն, որոնցից 432

[1] Ծրագիրն իրականացվում է Բաց Հասարակության Հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ (2013 թ. օգոստոսի 1- 2014 թ. հուլիսի 31)

տեղեկատվության հարցում, 3 հայցադիմում ՀՀ վարչական դատարան, 17 հաղորդում, 213 դիմում, 10 վերաքննիչ բողոք, 10 վճռաբեկ բողոք, 1 վարչական բողոք և 7 միջնորդություն պատկան մարմիններին: Կազմակերպության կողմից ուղարկված 732 գրությունից 117 գրության պատասխան չի ստացվել, որոնցից 104-ը՝ ԱԺ պատգամավորներին ուղարկված հարցման պատասխան[2]:

2013 թ. կազմակերպության Երևանի, Սպիտակի, Տաշիրի և Ալավերդու ներկայացուցչությունների կողմից իրավական աջակցություն է ցուցաբերվել 381 քաղաքացու (235 բանավոր ընթացակարգով, 146 գրավոր ընթացակարգով): Հարկ է նշել, որ քաղաքացիները կազմակերպության ներկայացուցչություններ հիմնականում դիմել են սեփականության, սոցիալական ապահովության, արդար դատաքննության, ընտանեկան, աշխատանքային, տեղեկատվության ազատության, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների, հողային իրավունքների խախտման դեպքերով: Առավել ակտիվ գործունեություն է տարածել ՀՔԱ Վանաձորի գրասենյակի Սպիտակի ներկայացուցչությունը. 2013 թ. Սպիտակի ներկայացուցչության կողմից խորհրդատվություն է տրամադրվել 288 քաղաքացու, որից 82 քաղաքացու գործ շարունակվել է գրավոր ընթացակարգով, իսկ վերջիններից 34-ը շարունակվել է դատական կարգով:

2013 թ. Սպիտակի ներկայացուցչություն դիմել են հիմնականում հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերի, դրանց լուծման կարգի ու եղանակների վերաբերյալ հարցերով:

Սպիտակ քաղաքում մեծ խնդիր է հանդիսանում արխիվային փաստաթղթերի պահպանված չլինելը՝ պայմանավորված աղետի գոտի լինելու հանգամանքով, ինչը խոչընդոտ է հանդիսանում աշխատանքային ստաժի վերականգնման համար, որով պայմանավորված հաշվետու ժամանակահատվածում 45 քաղաքացու գործով կազմակերպության կողմից կազմվել է դիմում՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջի մասին և դատական կարգով վերականգնվել է քաղաքացիների աշխատանքային ստաժը: Սպիտակի ներկայացուցչության կողմից նախաձեռնված դատական գործերը հիմնականում կապված են եղել աղետի գոտու վերականգնման պետական ծրագրի շրջանակներում բնակարան ստանալու իրավունքի հետ, մասնավորապես վարչական մարմինները (բնակարանների բաշխման հարցերով հանձնաժողով և քաղաքաշինության նախարարություն) քաղաքացիներին կամայականորեն զրկել են բնակարան ստանալու իրավունքից: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի Սպիտակի ներկայացուցչության կողմից նախաձեռնված դատական գործերով վերականգնվել է 17 քաղաքացու բնակարան ստանալու իրավունքը, իսկ նրանցից 8-ը 2013 թ. ստացել են իրենց բնակարանները:

Մեծ թիվ են կազմել նաև սեփականության իրավունքի պաշտպանությանն առնչվող գործերը:

2013 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գանգատներ է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ) 4 գործով:

ՄԻԵԴ ներկայացված գանգատները վերաբերել են հետևյալ իրավունքներին՝

- անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք, արդար դատաքննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք՝ 2 գործ,
- կյանքի իրավունք՝ 1 գործ
- խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք՝ 1 գործ:

2013 թվականից կազմակերպությունը համագործակցում է Մարդու իրավունքների շահերի պաշտպանության եվրոպական կենտրոն իրավապաշտպան ՀԿ-ի հետ (European Human Rights Advocacy Centre/EHRAC), որի շրջանակներում EHRAC-ը մասնագիտական աջակցություն է տրամադրում կազմակերպության իրավաբաններին, մասնավորապես՝ ՄԻԵԴ ուղարկվող գործերով: 2013 թ. EHRAC-ի կողմից խորհրդատվություն է տրամադրվել ՄԻԵԴ ներկայացված գործերից 2-ով, որոնցից մեկը ներկայացվել է համատեղ:

[2] 2013 թ. սեպտեմբերի 9-ին Մաքսային միությանը միանալու վերաբերյալ կատարվել է գրավոր հարցում ՀՀ ԱԺ 130 պատգամավորների, որոնցից 104-ը չեն պատասխանել հարցմանը: Հարցման նպատակն էր պարզել, պատգամավորներից քանիսն են կողմ, և քանիսը՝ դեմ ՀՀ-ին Մաքսային միությանը անդամակցելուն:

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված գործողություններ

2013 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը շարունակել է ուսումնասիրել և բացահայտել զինված ուժերի բնագավառի հիմնական խնդիրները, որոնք առնչվել են զինծառայության ընթացքում մահացության դեպքերին, հրադադարի ռեժիմի խախտումներին և դրանց հետևանքներին, օրենսդրական դաշտի անհստակությանը և կամայական փոփոխություններին, զորակոչի գործընթացում բազմաթիվ թերացումներին, ոչ պատշաճ բժշկական ծառայության խնդիրներին զորակոչի և զինծառայության ընթացքում:

«ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կայունություն և զարգացում» ծրագրի շրջանակներում 2013 թ. իրականացվել է ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների խախտման փաստերի արձանագրում լրատվամիջոցների մշտադիտարկման, դաշտային այցելությունների, զորակոչիկների, զինծառայողների և նրանց հարազատների կողմից տրամադրված համապատասխան տեղեկատվության հավաքագրման, պաշտպանական գերատեսչությունից և նրա ստորաբաժանումներից ձեռք բերված պաշտոնական տեղեկատվության ուսումնասիրման միջոցով: Լրատվական միջոցների մշտադիտարկման արդյունքների հիման վրա կազմվել է 2013 թ. ՀՀ զինված ուժերում մահացության դեպքերի վիճակագրությունը, մահացության դեպքերի հանգամանքների նկարագրությունները, դրանց բացահայտման վերաբերյալ քննության ընթացքը:[3]

Թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված գործողություններ

ՀՀ նարկոլոգիական բուժհաստատություններում թմրամիջոցից կախվածություն ունեցող անձանց մարդու իրավունքների վիճակի ուսումնասիրման նպատակով 2013 թ. մայիս-հունիս ամիսների ընթացքում իրականացվել է մշտադիտարկում Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսերում, Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում և Ավանի նարկոլոգիական կլինիկայում:

Մշտադիտարկումը բաղկացած է նախապատրաստական մասից, տվյալների հավաքագրումից, արդյունքների ամփոփումից, օրենսդրական վերլուծությունից: Մշտադիտարկման արդյունքները կամփոփվեն «Մարդու իրավունքների վիճակը ՀՀ նարկոլոգիական բուժհաստատություններում 2013 թ.» զեկույցում:

2013 թ. հուլիսին կայացել է «Թմրամիջոցներ գործածող անձանց արդար դատաքննության իրավունքի պաշտպանվածության վիճակը»[4] զեկույցի շնորհանդեսը, որը պատրաստվել է Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերում և Երևան քաղաքում իրականացված քրեական գործերի ուսումնասիրության հիման վրա: Շնորհանդեսին մասնակցել են ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ ոստիկանության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Պարզելու համար, թե որքանով են ԶԼՄ-ներն անդրադառնում թմրամիջոցից կախվածություն ունեցող անձանց իրավունքների վիճակին, իրականացվել է ԶԼՄ մշտադիտարկում: Թմրամիջոցից կախվածություն ունեցող անձանց վերաբերյալ նյութերը ուսումնասիրվել են 13 լրատվական կայքէջերում[5]: Ուսումնասիրվել են թվով 365 նյութ, որոնցից 106-ը՝ պաշտոնական կայքէջերից, 259-ը՝ ոչ պաշտոնական: Ուսումնասիրված նյութերն իրենց բնույթով բաժանվել են երեք խմբի՝ իրավիճակի ներկայացում, կանխարգելիչ բնույթի և պատժիչ բնույթի: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կանխարգելիչ բնույթի միջոցառումները շատ քիչ թիվ են կազմում: 2013 թ. կտրվածքով կազմակերպության կողմից ուսումնասիրված 13 ԶԼՄ-ներով տարածված 365 նյութերից ընդամենը 20%-ն է կրում կանխարգելիչ բնույթ, պատժիչ բնույթ ունեն ուսումնասիրված նյութերի 41%-ը:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված գործողություններ

Մշտադիտարկում նյարդահոգեբուժական բուժհաստատություններում

2013 թ. մայիս-հուլիս ամիսների ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվել է

3 Տեղեկանք 2013 թ. զինված ուժերում մահացության դեպքերի մասին, http://hcav.am/publications/teghekanq2013/

4 «Թմրամիջոց գործածող անձանց արդար դատաքննության իրավունքների պաշտպանվածության վիճակը» զեկույց, http://hcav.am/wp-content/uploads/2013/07/tmramijoc_book-5.pdf

5 police.am, moh.am, genproc.am, hhpress.am, a1plus.am, ilur.am, lragir.am, armlur.am, 1in.am, galatv.am, operativ.am, slaq.am, 7or.am

մշտադիտարկում ՀՀ բոլոր նյարդահոգեբուժական բուժհաստատություններում[6]: Մշտադիտարկման նպատակն էր բացահայտել նյարդահոգեբուժական բուժհաստատություններում մարդու իրավունքների վիճակը և նպաստել դրանց բեռնաթափմանը, Հայաստանի Հանրապետությունում այլընտրանքային, համայնքահենծառայությունների ներդրմանը՝ հիմք ընդունելով միջազգային նորմերը, մասնավորապես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան: Մշտադիտարկման արդյունքում բացահայտվել է, որ ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատությունում մեծ են մարդու իրավունքների խախտումների դրսևորումները, ինչը հիմնականում պայմանավորված է հաստատությունների փակ, հասարակական վերահսկողությանը դժվար ենթարկվող տիպի լինելով: ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում բացահայտվել են խնդիրներ՝ կապված դաժան և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ներառյալ ֆիզիկական և հոգեբանական բռնության հետ, պատշաճ խնամքի ու բուժման բացակայության հետ, կյանքի վատ պայմանների հետ, համայնքից մեկուսացված, զատված, հասարակության աչքից հեռու լինելու հետ:

Ձեռք բերված տեղեկատվությունը ամփոփվել է «Մարդու իրավունքների վիճակը ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում 2013 թ.: Հիվանդանոցը երբեք տուն չի դառնա ոչ ոքի համար» զեկույցում, որը կհրապարակվի 2014 թ.:

Հոգեկան և նարկոլոգիական բժշկական օգնության և խնամքի ծառայությունների ֆինանսավորման գնահատում

2013 թ. կազմակերպության կողմից հանրությանն է ներկայացվել «Հոգեկան և նարկոլոգիական բժշկական օգնության և խնամքի ծառայությունների ֆինանսավորման գնահատում» զեկույցը: Զեկույցը կազմվել էր կազմակերպության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում, որն անդրադառնում է հոգեկան առողջության ոլորտում բժշկական ծառայությունների մատուցման համապատասխանությանը ոլորտը կարգավորող օրենսդրության հետ, սոցիալ-հոգեբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող և թմրամիջոց գործածող անձանց իրավունքների իրականացմանը և հանրային ֆինանսների ծախսման արդյունավետությանը ու թափանցիկությանը նշված բժշկական ծառայությունների մատուցման ժամանակ:

Ուսումնասիրության արդյունքում մասնավորապես պարզվել է, որ հոգեբուժական և նարկոլոգիական ծառայությունների մատուցման մակարդակը թե՛ քանակական և թե՛ որակական առումներով անբավարար է: Պետական ֆինանսների սղության պայմաններում նյարդահոգեբուժական բուժհաստատություններին հատկացվող գումարները բավարար չեն ծառայությունների անհրաժեշտ որակն ու քանակն ապահովելու համար:

Ծախսերի արդյունավետության բարձրացմանը չի նպաստում նաև ոլորտի նկատմամբ պետության վերաբերմունքը և քաղաքականությունը: Պետական պատկան մարմինները անհրաժեշտ ուսումնասիրություններ և վերահսկողություն չեն իրականացնում ծառայությունների մատուցման որակի վերաբերյալ, չի կատարվում կարիքների գնահատում, հստակ չեն ծառայությունների համար սահմանված գները: Պետության կողմից ոչ պատշաճ վերաբերմունքը հիմնավորվում է նաև պետական բյուջեից հատկացվող ֆինանսավորման ծավալներով, որը որոշվում է՝ հաշվի չառնելով կարիքը:

Հարկ է նշել, որ պետական քաղաքականությունը ունի մնացորդային բնույթ, քանի որ հոգեբուժական և նարկոլոգիական ծառայությունները ֆինանսավորվում են առողջապահության այլ ոլորտներին հատկացումներ կատարելուց հետո՝ մնացյալ բյուջեի չափով: Մինչդեռ հանրապետությունում նարկոլոգիական և հոգեբուժական բժշկական օգնության կարիք ունեցող անձանց թիվն աճման միտում ունի: Ոլորտի առջև ծառացած բազմաթիվ խնդիրներն ու մարտահրավերները փորձ է արվում լուծել հնացած մեթոդներով, բացակայում են ոլորտի զարգացմանն ուղղված ռազմավարական և հայեցակարգային փաստաթղթերը:

6 Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր, Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր, Արմաշի առողջության կենտրոն, Գյումրու հոգեկան առողջության կենտրոն, Սևանի հոգեբուժական հիվանդանոց, Հոգեբուժական բժշկական կենտրոնի Նուբարաշենի, Ավանի, Նորքի հոգեբուժական, Քասախի նևրոզների կլինիկաներ

Հոգեբուժարանների մոնիթորինգ Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր

ԶԼՄ մշտադիտարկում

Կազմակերպության կողմից իրականացվել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց և առհասարակ հոգեկան առողջության վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով տարածված նյութերի մշտադիտարկում, որի նպատակն էր բացահայտել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների վիճակը Հայաստանում՝ ըստ զանգվածային լրատվության միջոցներով տարածվող նյութերի: Մշտադիտարկման ընթացքում դիտարկվել են ընդհանուր թվով 13 պաշտոնական և ոչ պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներ:

2013 թվականի ընթացքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մասին 13 կայքէջից հավաքագրվել է 106 նյութ:

Նյութերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մեծ թիվ են կազմում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից կատարված հանցագործությունները լուսաբանող նյութերը: Իսկ նման նյութերը խթանում են հասարակական այն կարծիքը, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք հանցագործներ են կամ մեծ է նրանց կողմից հանցագործությունների կատարման հավանականությունը: Լայն տարածում ունեն նաև այն նյութերը, որոնք լուսաբանում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից կատարվող ինքնասպանությունները կամ ինքնասպանության փորձերը, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից կատարվող հասարակության կողմից անընդունելի գործողությունները, նրանց հասարակության համար վտանգավորությունը և հասարակությունից մեկուսացման անհրաժեշտությունը:

Նման լուսաբանումները խոչընդոտում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համայնքում ներգրավմանը:

Համաձայն զանգվածային լրատվության միջոցներով տարածվող նյութերի՝ 2013 թ. ընթացքում լուրջ աշխատանքներ են իրականացվել հոգեկան առողջության ոլորտում բարեփոխումների իրականացման համար, միաժամանակ հոգեբուժական բուժհաստատություններում արձանագրվել են մարդու իրավունքների խախտումներ, որոնք հոգեբուժական հաստատությունների աշխատակիցների ապօրինի գործողությունների հետևանք են եղել:

Միաժամանակ զանգվածային լրատվական միջոցների կողմից լուսաբանվել են այնպիսի նյութեր, որոնք անուղղակի ձևով խախտում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքները՝ խոչընդոտելով նրանց իրավունքների իրականացմանը: Ինչպես նաև լուսաբանվել են նյութեր, որոնց միջոցով անմիջականորեն խախտվել են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքները: Մասնավորապես՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անձնական տվյալների հրապարակմամբ խախտվել է անձի անձնական կյանքի և գաղտնիության իրավունքը:

«ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կազմակերպական կարողությունների զարգացում» ծրագիրը[7] նպատակ ունի ապահովել ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործունեության կայունությունը և հարատևությունը կազմակերպության ինստիտուցիոնալ զարգացման միջոցով:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են մի շարք դասընթացներ կազմակերպության աշխատակազմի համար:

---

[7] Ծրագիրն իրականացվում է «Քաունթերփարթ ինթերնեշնլ ինկ.», հայաստանյան ներկայացուցչության ֆինանսական աջակցությամբ (2013 թ. փետրվար 1-2014 թ. մայիս 1)

Կազմակերպության հիմնական աշխատակազմը մասնակցել է «Ռազմավարական պլանավորում» թեմայով դասընթացին, որից հետո աշխատակիցները ձեռնամուխ են եղել կազմակերպության գործող ռազմավարական պլանի վերանայմանը: Այս գործընթացը կազմակերպության համար վերածվեց մի նոր հնարավորության՝ վերանայելու իր ռազմավարական նպատակները, խնդիրները,

«Ռազմավարական պլանավորում» թեմայով դասընթաց, Ծաղկաձոր

գործունեությունը, ինչպես նաև ակնկալվող և վերջնական արդյունքները: Վերանայված փաստաթուղթը միտված է նպաստելու ՀՔԱ

Հետազոտության մեթոդների վերաբերյալ դասընթաց, Ծաղկաձոր

Վանաձորի գրասենյակի գործունեության նկատմամբ ավելի համապարփակ մոտեցման ձևավորմանը:

2013 թ. հուլիսի 26-27-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները մասնակցել են մարդկային ռեսուրսների կառավարման վերաբերյալ դասընթացի: Ներգրավվել է փորձագետ որի կողմից մինչև 2014 թ. առաջին կիսամյակը կմշակվի կազմակերպության Մարդկային ռեսուրսների ռազմավարական զարգացման պլանը և Մարդկային ռեսուրսների ձեռնարկը:

Տարվա ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կազմակերպել է մի շարք աշխատանքային հանդիպումներ փորձագետների հետ կազմակերպության ընթացակարգային փաստաթղթերը մշակելու նպատակով: Կազմակերպությունը համագործակցել է կազմակերպության խորհրդի հետ խորհրդի կանոնակարգը և քաղաքականությունը վերանայելու և վերջնական տեսքի բերելու նպատակով: 2013 թ. ավարտին կազմակերպությունը վերջնական տեսքի է բերել 2014-2018 թթ. ռազմավարական ծրագրով նախատեսված գործողությունները:

2013 թ. հոկտեմբերին ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իր հիմնական աշխատակազմի համար անցկացրել է դասընթաց հետազոտության մեթոդների վերաբերյալ: Եռօրյա դասընթացի ընթացքում վերանայվել և ամփոփվել է նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ կազմակերպության քաղաքականությունը:

«Ռազմավարական դատավարությունների վարչարարություն»[8] ծրագրի նպատակն էր ռազմավարական դատավարությունների անցկացման միջոցով բարելավել մարդու իրավունքների պաշտպանության վիճակը և խոշտանգումների կանխարգելման գործելակերպը զինված ուժերի և ոստիկանության համակարգում: Ծրագրի արդյունքում կազմակերպությունը ձեռք է բերել և կատարելագործել է ենթադրամաշնորհների կառավարման հմտություններ: Ծրագրի շրջանակներում մրցութային կարգով ընտրվել և ֆինանսավորվել է ռազմավարական նշանակություն ունեցող 4 գործ, որից մեկը գտնվել է նախաքննության փուլում, երկուսը՝ դատաքննության փուլում, և մեկ գործ էլ քննվել է ներպետական բոլոր ատյաններում: Գործերն առնչվել են արդար դատաքննության իրավունքին և խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու

[8] Ծրագիրն իրականացվել է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA) հայաստանյան ներկայացուցչության կողմից (2012 թ. նոյեմբերի 1-2013 թ. մայիսի 1)

իրավունքին, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի թիվ 7 Արձանագրությամբ ամրագրված իրավունքին (բացառապես օրենքի վրա հիմնված պատիժ): Ծրագրի շրջանակներում տարբեր հանդիպումներ են կազմակերպվել Լոռու, Շիրակի, Տավուշի և Սյունիքի մարզերից փաստաբանների ներկայությամբ, որոնց ընթացքում քննարկվել են ռազմավարական դատավարությունների կարևորությունը առաջնահերթորեն զինված ուժերում հոստիկանության կողմից խուզարկության, ձերբակալության և կալանավորման ընթացքում մարդու իրավունքների խախտումների գործերով: Փաստաբանների համար կազմակերպվել է նաև խորհրդատվություն՝ ծրագրում ընդգրկված գործերի դատաքննության ռազմավարությունը մշակելու նպատակով:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Քաղաքացիական վերահսկողություն 2013 թ. նախագահական ընտրությունների նկատմամբ»[9] ծրագիրն ուղղված էր կանխելու ընտրախախտումները և վերականգնելու խախտված իրավունքները՝ հանցագործության վերաբերյալ հայտարարությունների պատրաստման, բողոքների ուղղությամբ ուսումնասիրությունների իրականացման և հաշվետվությունների պատրաստման, ընտրական գործընթացները բարելավելու նպատակով առաջարկությունների մշակման և ներկայացման միջոցով:

Նախագահական ընտրություններ 2013 թվական

Ծրագրի ընթացում կազմակերպության կողմից դիտորդական առաքելություն է իրականացվել Լոռու և Տավուշի մարզերում ինչպես նախընտրական քարոզչության ընթացքում, այնպես էլ ընտրությունների օրը: Քվեարկության օրը Լոռու մարզում դիտարկվել են 34 ընտրատեղամաս, իսկ Տավուշի մարզում՝ 16:

Թե՛ նախընտրական քարոզչության և թե՛ քվեարկության օրը կազմակերպության դիտորդներն արձանագրել են բազմաթիվ խախտումներ, որոնց վերաբերյալ տարածվել են հայտարարություններ և հաշվետվություններ՝ ԶԼՄ-ների և կազմակերպության կայքէջի միջոցով:

Կազմակերպության դիտորդների կողմից արձանագրված խախտումները վերացնելու նպատակով կազմակերպության կողմից պատրաստվել են 7 գրություն, որոնցից 4-ն ուղարկվել է ՀՀ ոստիկանություն՝ դրանցից 3-ի պատճենը՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, 2 գրություն ուղարկվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով և 1 գրություն՝ թիվ 29 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Հատկանշական է, որ ոստիկանության Վանաձորի, Իջևանի, Տաշիրի, Գուգարքի բաժիններում և Լոռու մարզի և Գուգարքի քննչական բաժիններում կազմակերպության կողմից ուղարկված տեղեկանքներում նշված յուրաքանչյուր խախտման վերաբերյալ նախապատրաստվել են նյութեր, սակայն նախապատրաստված նյութերը թողնվել են անհետևանք որևէ անձի արարքում իրավախախտման որոշումներ կամ հանցագործության հատկանիշներ չհայտնաբերվելու հիմքով: Դիտորդական առաքելության արդյունքները ամփոփվել են զեկույցում[10]:

«ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների հզորացումը» ծրագրի[11] շրջանակներում իրականացվել է զինծառայության ընթացքում զինծառայողների իրավունքների խախտումների, ներքին բողոքարկման մեխանիզմների, բժշկական ծառայության տրամադրման վիճակի ուսումնասիրություն, որի նպատակով հարցազրույցներ են իրականացվել 2012 թ. զինված ուժերի կարգապահական կանոնագրքի ընդունումից հետո զորացրված անձանց հետ:

9 Ծրագիրն իրականացվել է Քաուսթերփարթ ինթերնեշնլ Հայաստան և Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (2013 թ. հունվարի 1-փետրվար 28)

10 «ՀՀ նախագահական ընտրությունների դիտորդական առաքելության զեկույց», հուլիսի 8, 2013 թ. http://hcav.am/publications/4571541/

11 Ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ դեսպանատան կողմից (2012 թ. սեպտեմբերի 7 – 2013 թ. մարտի 30)

Հետազոտության նպատակն էր պարզել 2012 թ. մարտին ընդունված ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքի կիրառման արդյունավետությունը:

Հետազոտության իրականացման համար մշակվել է որոշակի մեթոդաբանություն, որը բաղկացած է 2 փուլից՝ 1) ուսումնասիրություն, 2) տեղեկատվության աղբյուրներն ու դրանց հիման վրա ստացված տվյալների վերլուծություն:

Ուսումնասիրությունն անց է կացվել 2012 թ. ընթացքում զորացրված թվով 778 զինծառայողների շրջանում, որոնցից 336 անձ հարցման է ենթարկվել Երևանում, իսկ 442 անձ՝ Հայաստանի մարզերում: Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են «Մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության զինված ուժերում» զեկույցում[12]:

«ՏԻՄ կառավարման մշտադիտարկում» ծրագրի[13] ռազմավարական նպատակն էր բարձրացնել Վանաձոր համայնքի ինքնակառավարման մարմինների գործունեության հաշվետվողականությունը և թափանցիկությունը համայնքի բնակչության առջև: Ծրագրի հեռահար նպատակն է խթանել ստեղծված ուսումնասիրության մոդելի կիրառումը այլ համայնքներում և քաղաքացիներին ու քաղաքացիական խմբերին տրամադրել համայնքային վերահսկողության արդյունավետ գործիք, որի միջոցով կարող են համապարփակ եզրակացություններ կատարել ինքնակառավարման մարմինների արդյունավետության վերաբերյալ:

«ՏԻՄ կառավարման մշտադիտարկում» զեկույց

Ծրագրի շրջանակներում գնահատվել է Վանաձոր համայնքի ՏԻՄ որոշումների համապատասխանությունը ՏԻՄ օրենսդրությանը, համայնքի բնակիչների շահին և մարդու իրավունքներին: Իրականացվել է համայնքի վերջին 4 տարվա բյուջեների, տարեկան հաշվետվությունների և համայնքի ղեկավարի քառամյա զարգացման պլանի համեմատական վերլուծություն: Ծրագրի արդյունքում պատրաստվել է «Վանաձոր քաղաքի ՏԻՄ կառավարման գնահատում 2008-2012 թթ.» զեկույցը[14]:

Ծրագրի արդյունքները ներկայացվել են հանրությանը՝ առցանց, հեռուստատեսային և հանդիպում/քննարկումների միջոցով[15]:

«ՀՀ ոստիկանության բարեփոխումների ծրագիրն»[16] ուղղված էր ոստիկանության համակարգում ուսումնասիրությունների իրականացման արդյունքում ՀՀ ոստիկանության համակարգի բարեփոխումների ամրագրմանը՝ իրականացված մշտադիտարկման և ուսումնասիրության արդյունքում բացահայտված

ՀՀ Ոստիկանության բարեփոխումների ծրագրի շրջանակներում եթեր Ֆորտունա ՀԸ-ում

հիմնահարցերի վերաբերյալ առաջարկությունների

12 «Մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության զինված ուժերում». Զեկույց, http://hcav.am/publications/4548754/, http://hcav.am/events/487545/

13 Ծրագիրն իրականացվել է «Քաուսթերփարթ ինթերնեշնլ ինկ.», հայաստանյան ներկայացուցչության ֆինանսական աջակցությամբ (2012 թ. նոյեմբերի 1 – 2013 թ. հուլիսի 31)

14 «Վանաձոր քաղաքի ՏԻՄ կառավարման գնահատում 2008-2012 թթ.», http://hcav.am/wp-content/uploads/2013/07/զեկույցն-ամբողջությամբ.pdf

15 «Վանաձորը առաջ է գնում, բայց չի զարգանում: Վանաձոր քաղաքի ՏԻՄ կառավարման ՀՔԱՎ-ի գնահատականը», http://hcav.am/events/1541547/

16 Ծրագիրն իրականացվել է Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (2011 թ. Հունվար-2013 թ. օգոստոս)

մշակման, ինչպես նաև այդ առաջարկությունների ուղղությամբ շահերի պաշտպանության իրականացման միջոցով:

Ծրագրի նպատակին հասնելու համար անվճար իրավախորհրդատվություն է տրամադրվել բռնության զոհ դարձած, բնակարանի անօրինական խուզարկության ենթարկված, ինչպես նաև ոստիկանության բաժանմունքներ անօրինական բերման ենթարկված քաղաքացիներին և նրանց հարազատներին: Կազմակերպության կողմից իրականացվել է 7 ռազմավարական դատավարություն, ՁԼՄ մշտադիտարկում, ինչպես նաև ոստիկանության գործողությունների մշտադիտարկումազատ տեղաշարժիապահովման բնագավառում, կատարվել է խափանման միջոցի կիրառման, խուզարկությունների և ձերբակալման վերաբերյալ միջնորդությունների և նրանց բավարարման վիճակագրության վերլուծություն, իրականացվել է օրենսդրության վերլուծություն և օրենսդրության կիրառման ուսումնասիրություն, պատրաստվել են քաղաքացիների իրազեկման բարձրացմանն ուղղված սոցիալական գովազդներ և հեռուստատեսային հաղորդումներ, մշակվել են օրենսդրության և պրակտիկայի բարելավմանն ուղղված առաջարկություններ, պատրաստվել են տեղեկանքներ և զեկույցներ որոնցում վեր են հանվել մարդու իրավունքների խախտումների հանգեցնող պատճառները և ներկայացվել են դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ[17]: Իրավապահ մարմինների (ոստիկանություն, դատարաններ, դատախազություն) կամայականության համաթիվը հաշվարկելու/գնահատելու նպատակով իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն[18]:

Եռամյա ծրագիրը հնարավորություն տվեց իրականացնել խորքային և բազմակողմանի ուսումնասիրություն և բացահայտել ոստիկան-քաղաքացի հարաբերություններում առկա համակարգային խնդիրները:

«Զորակոչիկների և զինծառայողների իրազեկումը և նրանց ներգրավումը իրենց իրավունքների պաշտպանության մեջ» ծրագրի[19] նպատակն էր զորակոչիկների շրջանում իրազեկվածության բարձրացումը զորակոչի և զինծառայության ընթացքում իրենց իրավունքների վերաբերյալ: Ծրագրի շրջանակներում

Զորակոչիկների իրազեկման դասընթաց Վանաձորի թիվ 5 ավագ դպրոցում

իրականացվել են դասընթացներ Լոռու մարզի Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան և Ալավերդի քաղաքների զորակոչիկների համար: Դասընթացի մասնակից զորակոչիկները հնարավորություն են ունեցել ծանոթանալ հետևյալ թեմաներին՝ նախազորակոչիկների իրավունքներն ու պարտականությունները զինվորական հաշվառման ընթացքում, զորակոչիկների իրավունքներն ու պարտականությունները զորակոչի ընթացքում, զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները զինծառայության ընթացքում, տեղեկատվություն սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների համար: Մշակվել է տեղեկատվական գրքույկ զորակոչիկների և զինծառայողների իրավունքների ու պարտականությունների մասին[20]:

«Եվրոպական կամավորական ծառայություն»[21] ծրագրի շրջանակներում 2013 թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսների ընթացքում

17 Տ՛ես ՀՔԱ Վանաձորի գրասենյակի զեկույցները www.hcav.am կայքէջի «Հրապարակումներ» բաժնում, http://hcav.am/tag_publications/011/

18 «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը ՀՀ հյուսիսային մարզերում» http://hcav.am/wp-content/uploads/2014/04/ԻՐԱՎԱՊԱՀ-ՄԱՐՄԻՆՆԵՐԻ-ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ-ՀԱՄԱԹԻՎԸ.pdf

19 Ծրագիրն իրականացվել է 2013 թ. ապրիլ-սեպտեմբեր ամսիներին Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության/Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) ֆինանսական աջակցությամբ

20 «Տեղեկանք գրքույկ Հայաստանի Հանրապետությունում նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների իրավունքների և պարտականությունների մասին» http://hcav.am/wp-content/uploads/2013/09/տեղեկատվական-գրքույկը1.pdf

21 «Եվրոպական կամավորական ծառայություն» ծրագիրն օգնում է երիտասարդներին զարգացնելու համերաշխության զգացում՝ մասնակցելով կամ անհատապես կամ խմբերով հասարակական անվճար կամավորական աշխատանքներում: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության «Երիտասարդությունը շարժման մեջ» ծրագրի շրջանակներում:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հյուրընկալել էր 2 կամավոր Ավստրիական հելսինկյան ասոցիացիա հանուն մարդու իրավունքների և միջազգային երկխոսության կազմակերպությունից:

Կամավորների կողմից կազմակերպվել է փախստականների համաշխարհային օրվան նվիրված «Բռնագաղթ. փախստականները

«Բռնագաղթ. փախստականները Հայաստանում» խորագրով ցուցահանդես

Հայաստանում» խորագրով լուսանկարների ցուցահանդես Վանաձոր և Գորիս քաղաքներում: Ցուցահանդեսը նպատակ ուներ բարձրացնել Հայաստանում և հատկապես Լոռու մարզում ապաստան գտած փախստականների մասին իրազեկվածության մակարդակը[22]:

Ցուցահանդեսը բաղկացած էր Լոռու մարզում բնակվող փախստականների մասին պատմող լուսանկարներից և ամբողջ աշխարհում և Կովկասյան տարածաշրջանում բնակվող փախստականների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվական պաստառներից:

«Բռնագաղթ. փախստականները Հայաստանում» խորագրով ցուցահանդեսի բացումը կայացել է 2013 թ. հունիսի 22-ին Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում: Ցուցահանդեսն արժանացել է մի շարք լրատվամիջոցների և բազմաթիվ աշակերտների ուշադրությանը: Միջոցառմանը ներկա են եղել մոտ 100 մասնակից, ովքեր ներկայացրել են տարբեր երկրներ, այդ թվում՝ ԱՄՆ-ն, Վրաստանը, Իսպանիան, Իտալիան և Գերմանիան:

Եվրամիություն, թե Եվրասիական միություն թեմայով հանրային քննարկում

2013 թ. դեկտեմբերի 12-ին Եվրոպական կամավորական ծառայության կամավորներ Դանիել Լաաբերը և Փելին Օզմանը Հայաստանի ապագան. Եվրամիություն, թե Եվրասիական միություն թեմայով հանրային քննարկում-ներկայացում է կազմակերպել Վանաձորի ՀԿ-ների և երիտասարդների համար: Քննարկման ընթացքում կամավորները լսարանին ներկայացրել են Եվրամիությանն ու Մաքսային միությանն անդամակցելու դեպքում Հայաստանի համար սպասվող արդյունքների վերաբերյալ համեմատական վերլուծության արդյունքները[23]:

«Վանաձորի իրավաբանական կլինիկա»[24] ծրագրի նպատակն է զարգացնել երիտասարդ իրավաբանների մասնագիտական կարողությունները վատ վերաբերմունքի դեպքերով իրավաբանական խորհրդատվության տրամադրման և դատական ներկայացուցչության իրականացման բնագավառում: Ծրագրի շրջանակներում ստեղծվել է իրավաբանական կլինիկա, որտեղ ներգրավվել են 17 երիտասարդ իրավաբաններ Վանաձորի պետական և մասնավոր ԲՈՒՀ-երից: Կլինիկան լայն հնարավորություն է տալիս իրավաբանական ֆակուլտետի վերջին կուրսի ուսանողներին և վերջին տարիների շրջանավարտներին ծանոթանալ քրեական դատավարության և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմներին: Ծրագիրն իրականացվում է «Պոպուլեքս» փաստաբանական գրասենյակի հետ համատեղ:

Մինչ ծրագրի ավարտը կկազմակերպվեն 30 տեսական դասընթաց և գործնական

[22] «Բռնագաղթ. փախստականները Հայաստանում» ցուցահանդեսի առցանց տարբերակը. http://hcav.am/events/brnagaght/

[23] «Մաքսային միությանը անդամակցելու որոշումը մարդու իրավունքների տեսանկյունից բացառապես հետ քայլ է», Առավոտ, 12 դեկտեմբերի 2013 թ., **http://www.aravot.am/2013/12/12/414415/**

[24] Ծրագիրն իրականացվել է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA) հայաստանյան ներկայացուցչության ֆինանսական աջակցությամբ (սեպտեմբեր 2013 թ. - ապրիլ 2014 թ.)

վերապատրաստում 2 փաստաբանական գրասենյակներում, որտեղ մասնակիցները ձեռք կբերեն գործնական գիտելիքներ իրավաբանական

«Վանաձորի Իրավաբանական կլինիկա» ծրագիր

խորհրդատվություն տրամադրելու, համապատասխան իրավաբանական փաստաթղթեր կազմելու վերաբերյալ:

ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի բարելավման և խոշտանգումների կանխարգելման նպատակով մինչև ծրագրի ավարտը կֆինանսավորվեն 6 ռազմավարական գործեր:

Երիտասարդների կարողությունների զարգացումը և մարդու իրավունքների պաշտպանության գործընթացներին նրանց ներգրավելը ՀՔԱ Վանաձորի գրասենյակի համար հանդիսանում է ռազմավարական կարևոր խնդիր՝ իրավապաշտպանության կայունության և մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման տեսակետից:

«ՀՀ հատուկ քննչական ծառայության, դատախազության և ազգային անվտանգության ծառայության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների զարգացումը՝ որպես մարդու իրավունքների խախտման կանխարգելման երաշխիք Հայաստանում» ծրագրի[25] նպատակն է՝ զարգացնել վերահսկողության մեխանիզմներ հատուկ քննչական ծառայության, դատախազության և ազգային անվտանգության ծառայության նկատմամբ՝ որպես ՀՀ-ում մարդու իրավունքների խախտումների կանխարգելման երաշխիք: Ծրագրի խնդիրներն են բացահայտել հատուկ քննչական ծառայության, դատախազության և Ազգային անվտանգության ծառայության գործունեությունը կարգավորող ազգային օրենսդրության բացերը և օրենսդրության կիրառման հետ կապված թերությունները միջազգային նորմերի և առաջարկությունների տեսակետից և խնդիրները բերել հանրային օրակարգ:

Ծրագրի նպատակին հասնելու համար պլանավորվում է իրականացնել օրենսդրական վերլուծություն, դատական քննության մշադիտարկում և ՀՔԾ-ի, Դատախազության և Ազգային անվտանգության ծառայության կողմից պրակտիկայում մարդու իրավունքների խախտման դեպքերի ուսումնասիրություն ՀՔԾ-ի, Դատախազության և Ազգային անվտանգության ծառայության կողմից քննված և ավարտված գործերի ուսումնասիրության միջոցով:

Խաղաղասիրությանն աջակցող ծրագրերի իրականացում/մասնակցություն ծրագրերին միջազգային գործընկերության շրջանակներում

Հանդիսանալով մի քանի միջազգային ցանցերի անդամ՝ կազմակերպությունը 2013 թ. շարունակել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ:

2013 թ. հոկտեմբերին «Հզորացնել Կովկասը-գործընկերության կառուցում» թեմայով ուսուցողական այցելության շրջանակներում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հյուրընկալել է շուրջ 30 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մի շարք եվրոպական երկրներից: Ծրագրի մասնակիցները հանդիպել են Հայաստանում գործող մի շարք իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչների հետ և իրականացրել են հարցումներ հասարակության շրջանում՝ ծանոթանալու Հայաստանում մարդու իրավունքների վիճակին: Ծրագրի գործընկեր է հանդիսացել Եվրոպական միջմշակութային ֆորում գերմանական կազմակերպությունը:

«Կառուցիր խաղաղություն ինքդ: Քաղաքացիական հասարակությունը հանուն միացյալ Կովկասի», ծրագիրն (2012 թ. Սեպտեմբեր-2013թ. ապրիլ) ուղղված էր խաղաղասիրական գործունեության տարածմանը և իրականացմանը:

Ծրագրի շրջանակներում կազմակերպության ներկայացուցիչները մասնակցել են դասընթացների Գերմանիայում, Հոլանդիայում և Իսպանիայում:

Ծրագրի արդյունքում համագործակցություն է ձևավորվել Fundació Catalunya Voluntària իսպանական կազմակերպության հետ:

2013 թ. Կազմակերպությունը

25 Ծրագիրն իրականացվում է Ժողովրդավարության աջակցության ազգային ֆոնդի ֆինանսական աջակցությամբ (2013 թ. հուլիսի 1 – 2014 թ. հունիսի 30)

համագործակցություն է ձևավորվել CEMEA Rhône-Alpes ֆրանսիական կազմակերպության հետ: Համագործակցության շրջանակներում կազմակերպության ներկայացուցիչները մասնակցել են երիտասարդների կարողությունների զարգացմանը, միջմշակութային խնդիրներին և խաղաղասիրությանն ուղղված սեմինարի Ֆրանսիայում:

«Հույսը վերջինն է մեռնում» ֆիլմի ցուցադրություն

Մեկուսացված հասարակությունների միջև փոխվստահությանն ու երկխոսությանն ուղղված նախաձեռնությունների շրջանակներում 2013 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Թուրքիայի կոմիտեի հետ համատեղ իրականացրել է «Ուսուցիչները հանուն ժողովրդավարացման և խաղաղության կառուցման Թուրքիայում, Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում Հայաստանի հանրակրթական տարբեր դպրոցների ուսուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում նշված երկրների ուսուցիչների հետ: Հանդիպման արդյունքում ուսուցիչները տարբեր թեմաներով աշխատություններ են ներկայացրել, մասնավորապես այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսիք են՝ կրթական ոլորտի խնդիրները, կրթական համակարգում գենդերային անհավասարությունը, կրթության բնագավառում ռազմականացման դրսևորման դեպքերը և այլն:

2013 թ. սեպտեմբերի 1-ին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության աջակցությամբ նախաձեռնել է թեմատիկ ֆիլմի ցուցադրություն-քննարկում՝ նվիրված Անհայտ կորածների միջազգային օրվան: «Հույսը վերջինն է մեռնում» ֆիլմը նկարագրում է անհայտ կորած անձանց հարազատների հոգեվիճակն ու կարգավիճակը: Ֆիլմը նկարահանվել է Հայաստանի, Ադրբեջանի և ԼՂՀ-ի տարբեր մասերում բնակվող անհայտ կորածների ընտանիքներում: Ֆիլմի հեղինակը՝ Սյուզան Կրյոգերը, միաժամանակ ներկայացնում է հակամարտությունից տուժած բոլոր կողմերի անհայտ կորած անձանց ընտանիքների միանման պատմությունները: Ֆիլմը ներկայացնում է կոնֆլիկտից տուժած հասարակությունների խնդիրների ընդհանրությունները, երկուստեք մտահոգությունները: Ֆիլմի դիտմանը մասնակցել են վանաձորցի 25 երիտասարդներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Մասնակցություն իրավական ակտերի նախագծերի մշակմանը

Հանրային շահի պաշտպանությունը ՀՀ-ում

Հաշվի առնելով ՀՀ-ում հասարակական կազմակերպությունների զարգացման անհրաժեշտությունը՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ստանձնել է ներպետական դատարաններում հանրային շահի պաշպանության նպատակով հասարակական կազմակերպությունների և միավորումների կողմից հայցի հարուցման մեխանիզմների մշակման և ներդրման աջակցման գործընթացը:

Կազմակերպության կողմից իրականացվել է «Հանրային շահի պաշտպանությունը ՀՀ-ում» վերլուծություն, որը ներառել է ներպետական և օտարերկրյա օրենսդրության և միջազգային իրավունքի նորմերի ուսումնասիրությունը:

Վերլուծության արդյունքում կազմվել է առաջարկությունների փաթեթ, որն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ որպես «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումներ» նախագծի հայեցակարգին ուղղված առաջարկություններ[26]:

Առաջարկությունների փաթեթի քննարկման նպատակով 2013 թ. հոկտեմբերի 30-ին տեղի է ունեցել «առանցիողումների» ձևաչափով քննարկում, որին մասնակցել է ՀՀ արդարադատության փոխնախարար Ա. Օրբելյանը, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և փաստաբաններ: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի առաջարկությունների հիման վրա քննարկվել և նախագծվել է հանրային շահի պաշտպանության մեխանիզմների կատարելագործման համար անհրաժեշտ գործողությունների ցանկը:

Քրեական դատավարության օրենսգիրք

2013 թ. հունիս ամսին հրապարակվել է քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը՝ հերթական խմբագրությամբ, որում ներառվել են օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խմբին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ներկայացված առաջարկությունների մի մասը: Մասնավորապես՝ կազմակերպության առաջարկությունների հիման վրա փոփոխություններ են կատարվել՝ ուղղված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովմանը, քրեական վարույթ նախաձեռնելու, քրեական հետապնդում հարուցելու, կամ վարույթը դադարեցնելու ընթացքում կողմերի իրավունքների հստակեցմանը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ցանկ

Կարևորելով ՀՀ-ում մարդու իրավունքների ոլորտում առանձին պետական ծրագրի առկայությունը, որը կբխեր Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության իրական կարիքներից և խնդիրներից՝ կազմակերությունը մասնակցել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի մշակման գործընթացին:

Կազմակերպության կողմից մշակվել է առաջարկությունների 3 փաթեթ, որոնք լրամշակվել և լրացվել են միջոցառումների ծրագրի երեք խմբագրություններին համապատասխան:

Կազմակերպության կողմից առաջարկություններ են ներկայացվել կյանքի իրավունքի, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, ընտրական իրավունքների, արդար դատաքննության իրավունքի, անձնական անձեռնմխելիության և ազատության իրավունքի, զինծառայողների և զորակոչիկների իրավունքների, մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների, իրավապաշտպանական գործունեությամբ զբաղվող անձանց և կազմակերպությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ (տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրի մշակմանը ՀՔԱ Վանաձորի գրասենյակի մասնակցության վերաբերյալ տեղեկանքը[27]):

«Հաշմանդամություն ունեցող անձանց

26 «Հանրային շահի պաշտպանությունը ՀՀ-ում. Ներպետական դատարաններում հանրային շահի պաշտպանության նպատակով հասարակական կազմակերպությունների և միավորումների կողմից հայցի հարուցման հնարավորությունները», փետրվարի 19, 2013 թ., ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, http://hcav.am/wp-content/uploads/2013/11/այստեղ2.pdf, http://hcav.am/events/1547265/

27 http://hcav.am/events/1421784/

իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» օրենքի նախագիծ

Կազմակերպության կողմից մշակվել և ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովին է ներկայացվել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունների փաթեթ:

Կազմակերպության կողմից ներկայացված առաջարկությունների մի մասը ամբողջությամբ ներառվել է լրամշակված օրենքի նախագծում: Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման վերաբերյալ առաջարկության առնչությամբ արձանագրվել է, որ առաջարկվող միջոցառումները կկանոնակարգվեն ՀՀ կառավարության որոշմամբ, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության նպատակով շահագրգիռ հասարակական կազմակերպությունների դատական իրավասուբյեկտության ճանաչմանն ուղղված առաջարկը գնահատվել է որպես ժամանակավրեպ:

Նշված առաջարկությունների վերաբերյալ հեռախոսային քննարկումներ են տեղի ունեցել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալի և նույն նախարարության Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության մասնագետի հետ, որոնց ընթացքում պարզաբանվել են որոշ առաջարկությունների նպատակը և հիմնավորվածությունը:

Վերլուծություններ, ուսումնասիրություններ, այլընտրանքային զեկույցներ

2013 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը Սպիտակի Հելսինկյան խումբ ՀԿ-ի հետ համատեղ կազմել է այլընտրանքային տեղեկանք Ա. Հարությունյանն ընդդեմ ՀՀ-ի և Վիրաբյանն ընդդեմ ՀՀ-ի գործերով Հայաստանի կողմից վճիռների կատարման վերաբերյալ: Այլընտրանքային տեղեկանքը[28] ուղարկվել է ՄԻԵԴ վճիռների կատարման վարչություն, տեղեկանքի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունը ներկայացրել է ՀՀ կառավարության արձագանքը: Կազմակերպությունը մասնակցություն է ունեցել Բաց հասարակության Վրաստան հիմնադրամի կողմից նախաձեռնված ԱԼԳ ճանապարհային քարտեզի 2012-2013 թթ. մշտադիտարկման զեկույցների պատրաստմանը: 2013 թ. իրականացվել է ուսումնասիրություն «Դատական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ:

[28] https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=DH-DD%282013%291118&Language=lanEnglish&Site=CM

Մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված հասարակական միջոցառումներ

2013 թվականին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը

կազմակերպել է մի շարք մամուլի ասուլիսներ, քննարկումներ հեռուստատեսությամբ, հանդես է եկել հրատապ հայտարարություններով, կազմակերպել է բողոքի ակցիաներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանությանը: 2013 թվականին կազմակերպության կողմից նախաձեռնվել են 4 բողոքի ակցիաներ՝ ոստիկանության ապօրինությունների[29], Մաքսային միությանն անդամակցելուն դեմ[30] և ի պաշտպանություն ՀՀ քաղաքական բանտարկյալների[31]:

«Բոլորս էլ մանկությունից ենք» միջոցառում-փառատոն նվիրված ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 15-ամյակին

2013 թ. ապրիլին 15-ին լրացավ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հիմնադրման տասնհինգամյակը:

Կազմակերպությունն իր տարելիցը նշեց Վանաձոր քաղաքի բնակիչների հետ:

2013 թ. սեպտեմբերի 14-ին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը Վանաձորի Սայաթ-Նովայի անվան քաղաքային զբոսայգում կազմակերպեց «Բոլորս էլ մանկությունից ենք» խորագրով միջոցառում՝ նվիրված կազմակերպության տասնհինգամյակին:

Միջոցառումը նպատակ ուներ կազմակերպել ուրախ ժամանց վանաձորցիների համար և բարձրացնել մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը:

Միջոցառման շրջանակներում կազմակերպվել են բացօթյա ցուցահանդես, որտեղ ներկայացվել են ՀՀ Լոռու մարզի Վանաձորի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոցի սաների, Վանաձորի գեղարվեստի դպրոցի սաների աշխատանքները և «Բռնագաղթ. փախստականները Հայաստանում» լուսանկարների ցուցահանդեսը:

Միջոցառման ընթացքում կազմակերպվել են տարատեսակ ժամանցային ծրագրեր երեխաների և երիտասարդների համար: Վանաձորի երեխաների համար կազմակերպվել են կավճանկարչության, սպորտային և ինտելեկտուալ խաղ-մրցույթներ, ցուցադրվել են պարային համարներ և «Ծուռ հայելիների թագավորությունը» հեքիաթի մոտիվներով բեմականացում՝ Վանաձորի Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատության և Օրրան ՀԿ-ի սաների մասնակցությամբ:

Միջոցառման ընթացքում գործել է բացօթյա տաղավար, որտեղ ցանկացողները կարող էին տեղեկանալ կազմակերպության գործունեության վերաբերյալ և ձեռք բերել կազմակերպության հրապարակումները: Միջոցառումը եզրափակվել է ռոք-համերգով որին հրավիրված էին հայաստանյան չորս ռոք խմբեր:

---

29 «ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՅ ՔԵԶ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ», օգոստոս 28, 2013 թ. http://hcav.am/events/«-hh-nuստիկանություն-այ-քեզ-խայտառակու/

30 Շտապ հավաք ընդդեմ Մաքսային միությանն անդամակցելուն, դեկտեմբեր 2, 2013 թ.

31 Ոստիկանները քաշքշեցին Շանթ Հարությունյանի որդուն. «Արի ստեղ հլը, արի ասեմ» (Տեսանյութ), նոյեմբեր 9, 2013 թ. http://hcav.am/events/ ոստիկանները-քաշքշեցին-շանթ-հարությո/ Ոստիկանությունը խնդրում էր Արթուր Սաքունցին ակցիան անցկացնել Դատախազության դիմացի մայթում, դեկտեմբեր 20, 2013 թ. http://hcav.am/events/ոստիկանությունը-խնդրում-էր-արթուր-սա/

2013 թ. աշխատակազմի անդամները մասնակցել են տեղական և միջազգային 96 դասընթացների, համաժողովների և փորձի փոխանակման ծրագրերի (67 տեղական, 29 միջազգային), որոնք ուղղված են եղել մասնակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանը, և մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում փորձի փոխանակմանը: Կազմակերպության ներկայացուցիչները հանդես են եկել Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ զեկույցներով:

Միջազգային դասընթացներ, համաժողովներ

1. «Մարդու իրավունքների բարձրագույն դասընթաց», Լեհաստան, Վարշավա, 2012-2013 թթ.
2. «Ուսուցիչները հանուն ժողովրդավարության և խաղաղասիրության Թուրքիայում, Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում» դասընթաց, Թուրքիա, Ստամբուլ, 2013 թ. փետրվարի 7-10

3. «Զինված ուժերում մարդու իրավունքների մշտադիտարկման փորձագետների հանդիպում», Վարշավա, Լեհաստան, 2013 թ. մարտի 4-6

4. «Միավորման և հավաքների ազատությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում» դասընթաց, Մեծ Բրիտանիա, Լոնդոն, 2013 թ. մարտի 4-8

5. «Կառուցիր խաղաղություն ինքդ. քաղաքացիական հասարակությունը հանուն միավորված Կովկասի» դասընթաց, Հոլանդիա, Սխուրլ, 2013 թ. ապրիլի 10-17

6. «ՄԱԿ-ի ժողովրդավարական համայնքների քաղաքացիական հասարակության ֆորում», Մոնղոլիա, Ուլանբատոր, 2013 թ. ապրիլի 25-30

7. «Բանտերի մշակույթը. նորմերն ու իրականությունը Հարավային Կովկասում» համաժողով Վրաստան, Թբիլիսի, 2013 թ. ապրիլի 29

8. «ԱլԳ ՔՀՖ-ի առաջին աշխատանքային խմբի հանդիպում», Բրյուսել, Բելգիա, 2013 թ. մայիսի 14

9. «Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի առաջին աշխատանքային խմբի ամենամյա հանդիպում», Բրյուսել, Բելգիա, 2013 թ. մայիսի 15

10. «Պաշտպանության կառավարումը ընդլայնված անվտանգության համատեքստում» դասընթաց, Վրաստան, Թբիլիսի, 2013 թ. մայիսի 7-17

11. «Մարդու իրավունքները և անվտանգության ոլորտը» կլոր սեղան, Ուկրաինա, Կիև, 2013 թ. մայիսի 30-31

12. «Մարդկային չափման լրացուցիչ հանդիպում Անվտանգության ամենամյա համաժողով» Վիեննա, Ավստրիա, 2013 թ. հունիսի 19-20

13. «Խոսքի և արտահայտվելու ազատության իրավունք» դասընթաց, Ուկրաինա, Կիև, 2013 թ. հուլիսի 8-26

14. «Աշխատանքային հանդիպում Մարդու իրավունքներով զբաղվող իրավաբանների և

հասարակական կազմակերպությունների համար՝ ուղղված Հարավային Կովկասում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման գործընթացում հասարակական կազմակերպությունների մասնակցության հզորացմանը», Վրաստան, Թբիլիս 2013 թ. հուլիսի 19-21

15. «Քաղաքացիական համերաշխության պլատֆորմի ամենամյա հանդիպում», Լեհաստան, Վարշավա 2013 թ. սեպտեմբերի 28-29

16. «Կառուցիր խաղաղություն ինքդ. քաղաքացիական հասարակությունը հանուն միավորված Կովկասի» դասընթաց, Իսպանիա, Բարսելոնա, 2013 թ. սեպտեմբերի 28-հոկտեմբերի 5

17. «Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի 5-րդ համաժողով», Մոլդովայի Հանրապետություն, Կիշինև, 2013 թ. հոկտեմբերի 4-5

18. «Արևելյան գործընկերության տարածաշրջանային համագործակցության ծրագիր», Ռուսթավի, Վրաստան, 2013 թ. հոկտեմբերի 13-14

19. «ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ իրավապաշտպանների պաշտպանության առաջարկությունների տարածաշրջանային խորհրդակցություն» Թուրքիա, Ստամբուլ, 2013 թ. հոկտեմբերի 21-22

20. «Փիլնեթի եվրոպական պրոբոնո տարեկան համաժողով», Վարշավա, Լեհաստան, 2013 թ. հոկտեմբերի 24-25

21. «Կլինիկական իրավական կրթության 1-ին կոնֆերանս (ENCLE)», Վարշավա, Լեհաստան, 2013 թ. հոկտեմբերի 25-26

22. «Ընտրությունների զեկուցում. Եվրոպայի խորհրդի ձեռնարկ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար», Լիտվա, Վիլնյուս, 2013 թ. նոյեմբերի 14

23. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտում միջազգային պարտավորությունների կատարում» սեմինար, Լեհաստան, Վարշավա, 2013 թ. նոյեմբերի 17-24

24. «Դատաքննության մշտադիտարկման մեթոդոլոգիաները» դասընթաց, Լիտվա, Վիլնյուս, 2013 թ. նոյեմբերի 25-26

25. «Իրավապահ մարմինների դերը ՄԻԱՎ-ի տարածման պայքարի շրջանակներում», դասընթաց, Ղրղզստան, Բիշկեկ, 2013 թ. նոյեմբերի 28-29

26. «Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորում և Արևելյան գործընկերության գագաթաժողով», Լիտվա, Վիլնյուս, 2013 թ. նոյեմբերի 27-30

27. «Ազգային կանխարգելիչ մեխանիզմը և խոշտանգումների դեմ պայքարի այլ ձևերը. ձեռքբերումները և զարգացման հնարավորությունները» միջազգային համաժողով, Ուկրաինա, Կիև, 2013 թ. դեկտեմբերի 2-3



28. «Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմի ամենամյա ժողով» Լեհաստան, Վարշավա, 2013 թ. դեկտեմբերի 8-10

29. «Իրավապաշտպանների հարավկովկասյան ցանցի հանդիպում», Վրաստան, Թբիլիսի, 2013 թ. դեկտեմբերի 14-15

2013 թվականին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները մասնակցել են նաև փորձի փոխանակման ծրագրերի, մասնավորապես՝ 2 աշխատակիցներ՝ որպես միջազգային դիտորդներ, մասնակցել են սեպտեմբերի 9-ին կայացած Նորվեգիայի խորհրդարանական ընտրություններին, ևս 2 աշխատակից՝ 2013 թ. հոկտեմբերի 27-ին Վրաստանում կայացած հերթական նախագահական ընտրություններին:

Նորվեգիայի խորհրդարանական ընտրությունները դիտարկվում էին միայն մեկ հասարակական կառույցի՝ Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի կողմից, որը հրավիրել էր 34 դիտորդների նախկին խորհրդային երկրներից: Դիտորդները ներկայացնում էին Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմի անդամ կազմակերպությունները: Դիտորդական առաքելության շրջանակներում սեպտեմբերի 5-11-ը դիտորդները մասնակցել են դասընթացների և հանդիպումների Նորվեգիայի քաղաքական գործիչների, տարբեր կուսակցությունների թեկնածուների, հասարակական գործիչների և լրատվամիջոցների հետ:

2013 թ. հոկտեմբերի 27-ին Վրաստանում անցկացվեցին հերթական նախագահական ընտրությունները: Դիտորդական առաքելությունը համակարգվում էր վրացական Արդար ընտրությունների և ժողովրդավարության միջազգային ընկերակցության (ISFED) կողմից, որի հետ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը համագործակցում է Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմի շրջանակներում:

Նորվեգիայում և Վրաստանում իրականացված դիտորդության վերաբերյալ կազմակերպության ներկայացուցիչների կողմից պատրաստվել են հոդվածներ[32]:

32 «Որքան քիչ բյուրոկրատիա, այնքան շա՞տ դեմոկրատիա» 21 սեպտեմբերի, 2013 թ. http://hcav.am/events/որքան-քիչ-բյուրոկրատիա-այնքան-շա՞տ-դե/
«Վրաստանն ընտրեց իր նախագահին» 1 նոյեմբերի, 2013 թ., ՀՔԱ Վանաձորի գրասենյակ http://hcav.am/events/187549/

2013 թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում կազմակերպության կայքէջի հայերեն բաժնում տեղադրվել է 664 նյութ, որից՝ 67 հայտարարություն, 76 մամուլի հաղորդագրություն, 521 նորություն: Անգլերեն լեզվով տարածվել է 351 նյութ, որից՝ 51 հայտարարություն, 248 նորություն և 52 մամուլի հաղորդագրություն: Կայքէջի հայերեն բաժնում տեղադրված նյութերը դիտվել են 64876 անգամ, իսկ անգլերեն նյութերը՝ 79808 անգամ: Առավել հաճախ կայքն այցելել են Հայաստանի Հանրապետությունից, ԱՄՆ-ից և ՌԴ-ից:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2013 թ. տարածել է 36 զեկույց, տեղեկանք կամ հաշվետվություն, որոնցից 14-ը պատրաստվել է կազմակերպության կողմից:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կայքէջը (http://hcav.am/) նպատակ ունի լուսաբանել կազմակերպության գործունեությունը և իրազեկել հասարակությանը Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ: Կայքէջը հանդիսանում է տեղեկատվության այլընտրանքային աղբյուր հասարակության համար, որտեղ կարելի է ծանոթանալ թե՛ այլ լրատվամիջոցներից վերցված նյութերին, թե՛ կազմակերպության սեփական լրատվությանը:



Զեկույց. «2013 թվականին գարնանային զորակոչի ընթացքում զորակոչի գործընթացի եւ զորակոչիկների իրավունքների վիճակի մասին»



Տեղեկանք. «2013 թվականին հունվար-սեպտեմբեր ընթացքում ՀՀ գինված ուժերում մահացության դեպքերի վերաբերյալ»



Զեկույց. «Վանաձոր քաղաքի ՏԻՄ կառավարման գնահատում 2008-2012 թվականներին»



Տեղեկանք. «2011-2013 թվականների ՀՀ ոստիկանության բաժիններում քաղաքացիների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ»

Զեկույց. «ՀՀ նախագահական ընտրությունների դիտորդական առաքելության վերաբերյալ»



Զեկույց. «Թմրամիջոցներ գործածող անձանց արդար դատաքննության իրավունքի պաշտպանվածության վիճակը»



Զեկույց. «Հոգեկան և նարկոլոգիական բժշկական օգնության և խնամքի ծառայությունների ֆինանսավորման գնահատում»

Open Society Foundations - Armenia

ՏԵՂԵԿԱՆՔ

2013 Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԵՐՆԱԳԻՐ
2013

Տեղեկանք. «2013 թվականին հունվար-հունիս ամիսներին զինված ուժերում մահացության դեպքերի մասին»

Open Society Foundations - Armenia

ՏԵՂԵԿԱՆՔ

2013 Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ ԱՄԻՍՆԵՐԻՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԵՐՆԱԳԻՐ
2013

Տեղեկանք. «2013 թվականին հունվար-մարտ ամիսներին զինված ուժերում մահացության դեպքերի մասին»

ՀԵԼՍԻՆԿԻՅԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY VANADZOR OFFICE

ՏԵՂԵԿԱՆՔ

2012 Թ-ԻՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՎԵՐՆԱԳԻՐ
2013

Տեղեկանք. «Մարդու իրավունքների վիճակը ՀՀ զինված ուժերում 2012 թվականին»


HELSINKI CITIZENS' ASSEMBLY VANADZOR OFFICE
ՀԵԼՍԻՆԿԻՅԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

2013 թ. փետրվարի 18-ի 22 նախագահական թեկնածուների ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կարճաժամկետ դիտորդների հանձնարարականներ և եզրակացություններ

19 փետրվարի 2013 թ.

2013 թ. փետրվարի 18-ին 22 նախագահի թեկնածուների քվեարկության օրը ՀՔԱ Վանաձորի գրասենյակը զբաղվում էր դիտորդության 3 իրավիճակներ: Լուսաբ. և հանրային մասերկի թվով 50 թեկնածուներանձամբում և 16 շրջիկ գիտորդների միջոցով տեղեկություններ և կատարել մոտ 20 սms թեկնածուներանձամբ: Դիտորդականների իրավիճակներ են 22. թեկնածուի գործակցում և ՏԻԼՆ բանբերդիների հանձնարարական կարգերի պահանջների բարձրի միջոցով:

Դիտորդների տրամադրվել միջազգային քվեարկության թեկնածուում կոգնվել և հրապարակվել է 3 միջոցի, հաշվարկվածում 8:00-12:00-ն, 12:00-16:00 և 16:00-20:00-ն միջանկյալ: Հետազոտությունների միջանկյալ 7 դեպքում է ստացվել և 1 բանավոր հարցում 22 ասոցիացիաներից (տե՛ս և Հավելված 1):

Դիտորդների միջոցով ստացված են.

- Տեղամասերի մեջ բնակչան հանձնարարվերում որպես կանոն եղբոր են եղել միայն գրեթե հանդիսան. 22 հանրային քվեարկու գնահատի անձին, որոշ անդամներում Դաշնի Հանձնակերպի գնահատի անձին
- Հանձնակերպերը հիմնականում գրանցել են միասնական գաղտնագիր, լիարժեք հրանց բուռ կուսակցիական պատվիրակությունի բարձրաձայնության, առանձին անդամներում վրաձևի անձին են հանձնաժողով անդրան ինքնաստորագրման, պնտանական կատարյալ ստորձիների պրեսիդենտների
- Բացի մեջ կարգավերակարգության պիտոյությունից նշվեցին են եղել «Հանդուրժող ընտ Ս» 2-ին պիտոյությունը, որոնց հիմնականում հանձնաժողի, ին լիարժեքանական տեղակալական հիմնարկի կարգավերակարգության պիտոյությունը.
- Քվեարկության գիտաժամ՝ հասնելուցա 11-ից մինչև 15:00, ստանձնաժողի 3 գնահատվերի բուռ մեն հասց, որը մեջ է 1 հասնկուրա մեջ 17:00-ից 20:00 բեկան ժամանակահատվածում
- Լուսաբ մասերում առավել մեն թվով գնահատվեր մասնակցել են Մանկամանկան տարածաշրջանի գյուղերում, առավել քիչ՝ Վանաձորի և հարակից Գուգարք հանրային գնահատման տեղամասերում:
- Հնարավոր հանձնաժողովի բարդությունների դեպքերը ոչ տեղի վերաբերյալ քվեարկության օրը Մյասնիկ է լուսաբանվերի մեն հասց և անկախությունն:

Հետևյալ ներկայացվել է առանձին հարցերաշարերներում ստանձնաժողի են՝

- Հնարավորության բարձրաձայնի գնացքը

19 Գրիգոր Լուսավորչի փող., Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, Աբ. (+374 322) 4 12 06, Էլ.փոստ: hcav@hcav.am
Ցիրուն Մեկ Թ. Նանսենի, 2001, Հայաստանի Հանրապետություն, Աբ. (+374 322) 4 12 06, Էլ. փոստ: hcav@hcav.am

«2013 թվականի փետրվարի 18-ի ՀՀ նախագահական ընտրությունների ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կարճաժամկետ դիտորդության նախնական արդյունքները և եզրակացություններ»


ՀԵԼՍԻՆԿԻՅԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY VANADZOR OFFICE

2013 թ. Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների ընտրությունների նախընտրական քարոզչության դիտորդության արդյունքները և եզրակացությունները

/22 Լուսաբ և Տանձի մեջ գրանցում իրավասությունի պիտոյությունի արդյունքներ հիման վրա/

2013 թ. փետրվարի 18-ի 22 Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչությունը սկսվում՝ 2013 թ. հունվարի 21-ից մինչև փետրվարի 15-ն տեղյան ժամանակաշրջանում. Հետևյալներն մասնաբաժանների Ստեղծվեցի Վանաձորի գրասենյակի իրավասությունից նախընտրական դիտորդներ Լուսաբ. մեջ՝ Վանաձոր և Տանձի մեջ՝ Իջևան բնակավայրում: Դիտորդությունն Վանաձորում իրականացվեց 7, իսկ Իջևանում՝ 4 դիտորդների կողմից:

Դիտորդական դիտորդությունն ղեկավարվում գլխավորվեց ժամանակի են Իջևան և Վանաձոր բաղադրիչում 22. Նախագահի թեկնածուների հանդիպումների, զրույցել հանդիպման ժամանակների հետ, հետազոտությունն պետքում 22. Նախագահի թեկնածուն կամ նրա ներկայացուցչի հետ, ապրել են թեկնածուների հանդիպումների ընթացքում, զրույցել շտաբների ղեկավարների հետ:

Հասարակական ուսումնասիրության չորսդասական մասին

2013 թ. 22. Նախագահական ընտրությունների նախընտրական քարոզչության վերաբերյալ Վանաձոր և Իջևան բաղաքներում ապրիլի 16-ին 22. Նախագահի թեկնածուներից Միքայել Սարգսյանը, Լևոն Տեր-Պետրոսյանը, Հրանտ Բագրատյանը (Վանաձորում 2 նրբը հետատեսությունները), Իջևանում հանդիպում և միայն Վանաձոր: Դարաբաց Հանդիպումի կիսաբոլորական բոլորի ուշադրությունը (հանդիսատ. որը չի կրկնվել, բանի հանդիսավոր ելույթ են միայն Դարաբաց Հանդիպումի արդյունքը թվով 5 անգամ):

Դասընթացարարի կողմից իրականացված գնահատման արդյունքներ և բարդությունից ստացված անդամակերը. հանդիսատեսը են, որ դրա բնակությունների ընտրությունում նախընտրական քարոզչության ընթացքում վարչական ռեսուրսների օգտագործվելն իշխանության թեկնածուն օգտին:

Այդուհես,

- Վանաձորի քարոզարշավ Միքայել Սարգսյանի քարոզարշավերն հետ հանդիսանան հանդիպումներ և հանդիսական ազգ քարոզարշավերը անկիրգանվել են կուսակցիաներով, որ պետական հասանաբերությունների ուշադրությունները, մանկապարտեզներում հան հետևորների հրամանագիրն է պարտադիր ժամանակի Միքայել Սարգսյանի հանդիսությանը հանդիսությունը:

«2013 թվականին Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչության դիտորդության արդյունքները և եզրակացությունները»

HRD
THE SOUTH CAUCASIAN NETWORK OF HUMAN RIGHTS DEFENDERS
www.southcaucasianrights.org

Իրավապաշտպանների վիճակը Հայաստանում
2011 թ. հունվար - 2012 թ. նոյեմբեր

Զեկույցի Իրավապաշտպանների Հարավկովկասյան ցանցի տեղամասի

Հիշեցնում Փոստազրավական Նասոնդեղի Վանաձորի գրասենյակի կողմից

Իրավապաշտպանների Հարավկովկասյան ցանցի տեղամասերի ու գործընկերների մասնակցի են վերլուծի պատրաստմանը
Հանրային տեղեկատվության և վերլուծի կենտրոն - Հայաստան. Հիշեցնում Սասդանը.
Իրավունքի գիտությունը.

Աջակցվել՝ Սոքոնոյաց, Փոստազրավական պատ. պատ. Շանխարատ, Ֆոնտաց ինստիտուտի կենտրոն

Վանաձոր, Լեռնային 2012 թ.

«Զեկույց. «Իրավապաշտպանների վիճակը Հայաստանում»


HELSINKI CITIZENS' ASSEMBLY VANADZOR OFFICE
ՀԵԼՍԻՆԿԻՅԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

2013 թ. Հանրապետության Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչության դիտորդության արդյունքների 2013 թ. հունվարի 21-ից փետրվարի 4-ն ընկած ժամանակահատվածի կտրվածքով

22. 2013 թ. Հանրապետության Նախագահի ընտրությունների շրջանակներում Հայաստանի Քաղաքացիական Վանաձորի գրասենյակի իրավասությամբ է նախընտրական քարոզչության դիտորդություն Լուսաբ. մեջ՝ Վանաձոր և Տանձի մեջ՝ Իջևան քաղաքներում: Դիտորդությունն Վանաձորում իրականացվեց 7, իսկ Իջևանում՝ 4 դիտորդների կողմից:

Դիտորդության շրջանակներում գնահատվեցին ժամանակում են Իջևան և Վանաձոր քաղաքներում Նախագահի թեկնածուների հանդիպումները, զրույցում հանդիպման պաշտ ժամանակներին են, հետազոտությունն պետքում Նախագահի թեկնածուի կամ նրա ներկայացուցչի հետ, ապրում են թեկնածուների հանդիսությանի շտաբին, զրույցում շտաբների ղեկավարների հետ:

Բարդ ազգերությունների շրջանակներում ձեռնարկվեցին կողմից լուսաբում են դիտորդությանի հատկացրեցի գործիքներ:

Նախընտրական քարոզչություն

22. 2013 թ. Հանրապետության Նախագահի ընտրությունների շրջանակներում Վանաձոր և Իջևան քաղաքներում 2013 թվականի փետրվարի 4-ի դրությամբ գրանցում են հանդիսանի միայն մեկ թեկնածուներ՝ Միքայել Սարգսյանի հանրապետական շտաբները: Ինչը 1 նշել, որ նրանի քաղաքներում գրանցում են նաև Դաշնի Հանձնակերպի շտրեն մեկական շտաբներ:

2013 թ. փետրվարի 4-ի դրությամբ գնահատվեցին հաղորդագրությունները ստացվել Վանաձորում Միքայել Սարգսյանի 4 և Դաշնի Հանձնակերպի 1 հանդիսանական շտաբի գնահատվերի հետ, իսկ Իջևանում Միքայել Սարգսյանի 8 հանդիսանական շտաբի գնահատվերի հետ: Բան Միքայել Սարգսյանի հանդիսանական շտաբների գնահատվերից առավելագույնը գրանցում է Միքայել Սարգսյանի 57, իսկ Իջևանում՝ 7-ն հանդիսանական շտաբ: Վանաձոր քաղաքում գրանցում է հարյուրի 4 շտաբի գնահատվերից միայն մեկն է պատասխանել նշված հարցին, իսկ Իջևանում հարցված շտաբի 8 գնահատվերից 5-ը նշել են, որ գրանցում է 35 հանդիսանական շտաբ, մինչդեռ 34, իսկ նկատ շտաբի գնահատվեր 7:

Բան Միքայել Սարգսյանի հանդիսանական շտաբների գնահատվերի՝ շտաբերից 3-ում պատասում են գնացրել հիմնականերով /2 շտաբ Վանաձորում, 1 շտաբ Իջևանում՝ իսկ 9-ում՝ կամանվությունն սկզբունքով /1 շտաբ Վանաձորում, 8 շտաբ Իջևանում/: Մասնավոր է, որ գնահատաց ստանալ ապա բառերիցում պատասխանվելիցից 14-ը պատասում են վերաբերվել, իսկ 40-ը՝ կամանվությունն սկզբունքով:

19 Գրիգոր Լուսավորչի փող., Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, Աբ. (+374 322) 4 12 06, Էլ.փոստ: hcav@hcav.am
Ցիրուն Մեկ Թ. Նանսենի, 2001, Հայաստանի Հանրապետություն, Աբ. (+374 322) 4 12 06, Էլ.փոստ: hcav@hcav.am

«2013 թ. Հանրապետության Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչության դիտորդության արդյունքները 2013 թ. հունվարի 21-ից փետրվարի 4-ն ընկած ժամանակահատվածի կտրվածքով միջանկյալ զեկույց 2013 թ. հունվարի 21-ից փետրվարի 4-ն ընկած ժամանակահատվածի համար»

Բյուջեի համեմատական վերլուծություն 2011-2013 թթ.

(ՀՀ դրամ)

	2011	2012	2013
Անձնակազմի աշխատավարձ	48,747,722 51.95%	50,839,801 49.82%	65,100,127 54.30%
Ադմինիստրատիվ ծախսեր	7,215,556 7.69%	8,371,220 8.20%	9,443,886 7.88%
Ծրագրային ծախսեր	37,882,767 40.36%	42,837,396 41.98%	45,351,619 37.82%
Ընդհանուր	93,846,045	102,084,417	119,895,632

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 2013 թ. բյուջեի բաշխումը ըստ ֆինանսավորման աղբյուրների



- Խոշտանգումներից տուժածների վերականգնման վրացական կենտրոն, Վրաստան (GCRT)

Միջազգային և տեղական ցանցեր

- Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի ցանց
- Արևելյան գործընկերության (ԱԼԳ) Քաղաքացիական հասարակության ֆորում, Հայաստանի ազգային պլատֆորմ (EaP CSF, ANP)
- Քաղաքացիական համերաշխության պլատֆորմ (CSP)
- Մարդու իրավունքների տան ցանց, Մարդու իրավունքների տուն Երևան (HRHN, HRHY)
- Իրավապաշտպանների հարավկովկասյան ցանց (SCMHRD)
- Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմ (EPDE)
- Երիտասարդ խաղաղասերների միացյալ ցանց (UNOY)
- UNITED ազգայնականության, ռասիզմի, ֆաշիզմի դեմ և գաղթականների ու Փախստականների աջակցության Եվրոպական ցանց (UNITED)
- Գործընկերություն հանուն բաց հասարակության (POS)
- Հայաստանի մարդու իրավունքների ցանց (HRA Network)
- «Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնություն
- Հակաթմրամոլային քաղաքացիական դաշինք

Տեղական գործընկեր կազմակերպություններ

- Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ
- Հայաստանի հելսինկյան կոմիտե
- Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
- Երևանի մամուլի ակումբ
- Կանանց Ռեսուրսային կենտրոն
- Իրավունքի գերակայություն
- Լիարժեք կյանք
- Հելսինկյան Ասոցիացիա
- Հանրային տեղեկատվության և գիտելիքի կարիք
- Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե
- Իրական աշխարհ, իրական մարդիկ
- Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ
- Նոր սերունդ բարեգործական ՀԿ
- Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն

Միջպետական և միջազգային գործընկեր կազմակերպություններ

- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ
- Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ
- Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
- ԵՄ տեղեկատվական կենտրոն Հայաստանում
- Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանություն
- Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանատուն
- Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանություն
- Human Rights Watch
- Amnesty International
- Frontline Defenders - իրավապաշտպանների աջակցության կառույց
- Միջազգային կարմիր խաչի կոմիտե (ICRC)
- Բաց Հասարակության Հիմնադրամներ (OSF)
- Նորվեգիայի հելսինկյան կոմիտե (NHC)
- Մարդու իրավունքների շահերի պաշտպանության եվրոպական կենտրոն իրավապաշտպան ՀԿ (EHRAC)
- Մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամ, Լեհաստան (HFHR)
- Մարդու իրավունքների տուն հիմնադրամ, Նորվեգիա (HRHF)
- Ամերիկյան փաստաբանների ասոցիացիա. Իրավունքի գերակայություն նախաձեռնություն, ԱՄՆ (ABA ROLI)
- Արդար ընտրությունների և ժողովրդավարության միջազգային ընկերակցություն, Վրաստան (ISFED)

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Հայաստան, Վանաձոր 2001,
Հեռ.՝ (+374 322) 4 22 68
Ֆաքս՝ (+374 322) 4 12 36
Էլ. փոստ՝ hcav@hcav.am
www.hcav.am
www.facebook.com/hca.vanadzor

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի Գրասենյակ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013